ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

24-ը մայիսի 2022թ.
ժամը 15^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան /ԳԱՊ/,
ՀՀ ՊՆ ԳԿ ՎՏՎ տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ Մ. Ամիրյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետի ՊԺԿ Է. Համբարձումյան,
ՀՀ ՊՆ ԳԿ վերլուծության և պլանավորման բաժնի ավագ մասնագետ Ա. Բարսեղյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Տերյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Ֆոտոն» ՍՊԸ
2	«ԲԻ ԷԼ» ՍՊԸ
3	«Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ
4	«Արեգ-Արիան» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Ֆոտոն» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում ներառված բոլոր փաստաթղթերը հաստատված են կնիքով և ստորագրությամբ, իսկ հայտի Հավելված 1-ում նշված է, որ կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ: Եթե կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն, ապա ներկայացված հայտը պետք է հաստատված լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի և վերոնշյալ ընթացակարգի հրավերի 8.18-կետի, իսկ եթե կազմակերպությունը այլ երկրի ռեզիդենտ է, ապա անհրաժեշտ է շտկել ներկայացված հայտի Հավելված 1-ը, նշելով թե, որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում կազմակերպությունը: «ԲԻ ԷԼ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում է վերոնշյալ ընթացակարգի հրավերով նախատեսված Հավելված 1-ը և այդ հավելվածում կայքէջի հղման բացակայության դեպքում նաև հրավերով նախատեսված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.3-ը: Եթե կազմակերպությունը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն, ապա հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը պետք է հաստատված լինեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի և վերոնշյալ ընթացակարգի հրավերի 8.18-կետի: «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված հայտի ապահովման գումարը չի համապատասխանում վերոնշյալ ընթացակարգի հրավերով նախատեսված հայտի ապահովման գումարին /Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է հրավերով սահմանված առավելագույն գնի հինգ տոկոսին/: «Արեգ-Արիան» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում բացակայում է «ՀՀ ՊՆ- ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված հայտի ապահովումը:

ՈՒստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 24.05.2022թ. ծանուցել վերոնշյալ մասնակիցներին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ «ԲԻ ԷԼ» ՍՊԸ, որը շտկումներ չի ներկայացրել: ՈՒստի 26.05.2022թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովի կողմից,

հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ «ԲԻ ԷԼ» ՍՊԸ կողմից ներկայացրած հայտը մերժվեց:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Հ/Մ	Քանակը	Միավորի գների հանրագումարը	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Կահույքի պատրաստման աշխատանքներ	դրամ	1	1172500	«Ֆոտոն» ՍՊԸ	606666.67	728000	«Արեգ-Արիան» ՍՊԸ	860382	
								«ԲԻ ԷԼ» ՍՊԸ	972917	1167500
								«Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ	20400000	24480000

Չափաբաժնի առավելագույն գինը կազմում է 28 008 800 ՀՀ դրամ

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Արդյունքում «ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված և ընտրված մասնակցի հետ կնքվելիք պայմանագրով սահմանված ընտրված մասնակցի կողմից գնային առաջարկով միավորի գների հանրագումարի տեսքով առաջարկված գինը՝ **Մ.Գ** կազմում է **728 000** ՀՀ դրամ, պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված աշխատանքի համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ **Ն.Գ.** հավասար է **1 172 500** ՀՀ դրամ: Ելնելով «ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծում ներառված բանաձևի **Մ.Գ./Ն.Գ.** գործակիցը կկազմի **0.620:**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Տերյան)

4.1 26.05.2022թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Ֆոտոն» ՍՊԸ և վերջինիս, անգործության ժամկետի ավարտից հետո, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Տերյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-22-8/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող — Հ. Մելիքյան

Գնահատող — Մ. Ամիրյան

Գնահատող — Է. Համբարձումյան

Գնահատող — Ա. Բարսեղյան

Գնումները համակարգող՝ — Գ. Տերյան